

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԳՅԱՆ

Օգտվելով ազգային ժողովրդական բանահյուսության հարուստ գանձարանից՝ Աղայանը հիմք դրեց հայ գրականության մի շատ կարևոր և հետաքրքիր ժանրի՝ գեղարվեստական հեքիաթագրության: Նա բարձր գնահատելով հեքիաթի անգնահատելի դերը ժողովրդի հոգեւոր կյանքում՝ իրեն նվիրեց ժողովրդական հեքիաթներ մշակելու բարդ ու ստեղծագործական ջանքեր պահանջող գործին:

Գրողի համար հեքիաթներով զբաղվելու արգասավոր տարիները 1881-1911 թթ. են, երբ նա հավաքել ու սումնասիրել, օգտվել է հայկական, Մերձավոր Արևելքի, Անդրկովկասի եւ այլ ժողովուրդների բանավոր եւ գրավոր ստեղծագործություններից, մշակել է տասնյակ հեքիաթներ, փոխադրություններ ու թարգմանություններ է կատարել, որոնք ընթերցելիս չի զգացվում դրանց ոչ հայկական ծագումը:

Ե. Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում, Աղայանի անձնական արխիվում պահպանված ձեռագրերի վրա կատարած նշումների, գրառումների, ինքնագրերի սեռագիր տարբերակների ու Աղայանի ստեղծած գոհարների բաղդատումը բանալի են ծառայում թափանցելու գրողի հեքիաթագրության ստեղծագործական աշխարհը եւ ըստ ամենայնի առնչվելու նրա գրական մշակման հիմնական սկզբունքներին:

Աղայանը հեքիաթները, գրույցներն ու պատկերները մշակելիս, երբեք չբավարարվեց սկզբնաղբյուրներում նկարագրվող դեպքերով ու գործողություններով, այլ հարստացրեց նորանոր երանգներով, թարմ դրվագներով, պատմություններով եւ հմտորեն ավելացրեց հեքիաթի շարադրանքին: Ժողովրդական բնագիրը անցկացնելով ստեղծագործական քուրայով, ցուցաբերեց գեղագիտական բարձր ճաշակ՝ միշտ հավատարիմ մնալով ժողովրդական բնագրի ոգուն ու բուն նյութին:

Բանահյուսական նյութերի գրական մշակման նմուշներ են Աղայանի «Յախավելի գաղանիքը» առակ - գրույցը, ուր արծածվում է ժողովրդական բնագրերի հիմքում ընկած միասնական ուժի գաղափարը՝ («Գեղ կանգնի, գերան կկոտրի») հաղորդելով փիլիսոփայական - բարոյախոսական ընդհանրացում: Առաջին անգամ տպագրվել է «Ժողովրդական գրույց» վերնագրով («Վարժարան» ամսագրում), «Մանկական հեքիաթ», «Ճեղքն ու բախտը» եւ ուրիշ ստեղծագործություններ:

Յավոթ չեն պահպանվել Աղայանի հեքիաթների ձեռագիր բնագրերը: Աղայանի անձնական արխիվում պահվում են գրողի միայն չորս հեքիաթների ձեռագիր բնագրերը (մյուս հեքիաթների բնագրերը մեզ չեն հասել):

Այդ հեքիաթներից է «Ճիզախը կամ Աներկյուղը» (Ֆ - 8, թիվ 3, 8 էջից): Հեքիաթը սեռագրություն է, թերթերը մաշված, պատառոտված, ջնջումներով: «Ա» տարբերակը հեղինակն անվանել է «Ճիզախը», «Բ» տարբերակը՝ «Աներկյուղը»: «Ա» տարբերակն առաջին անգամ տպագրվել է 1911 թվականին, Աղայանի մահից հետո, «Ճիզախը» վերնագրով, «Հասկեր» ամսագրի թիվ 11-ում, հետեյալ մակագրությամբ. «Այս հեքիաթը վերջացած չէ: Վերջինս վերնագրով, «Հասկեր» ամսագրի թիվ 11-ում, հետեյալ մակագրությամբ. «Այս հեքիաթը վերջացած չէ: Հանված է այն թղթերից, որ հանգուցյալ Գ. Աղայանը մահից առաջ հանձնել է Հովհ. Թումանյանին: Իսկ երկրորդ տարբերակի ինքնագիրը՝ «Աներկյուղը» առանձին չի տպագրվել: 1947 թվականին Ա. Ե. Բ. տարբերակները միաժամանակ «Ճիզախը կամ Աներկյուղը» ընդհանուր վերնագրի տակ տպագրվել են Աղայանի երկերի ժողովածուի առաջին հատորում:

«Ասիայի ույշը» հեքիաթի ինքնագիրը՝ (Ֆ-8, թիվ 6ա, 6բ, 7) գրողի ուղղումներով ու շտկումներով, կազմված է երկու հատվածից: Առաջին հատվածն ունի երկու տարբերակ (12 էջ), իսկ երկրորդ հատվածը առաջինի օրգանական շարունակությունն է (24 էջ): Գրողի ֆոնդում պահպանվել է մի հեքիաթի ձեռագիր եւս՝ «Լինում է չի լինում» սկզբնատողով, անվերնագիր (Ֆ-8, թիվ 15, էջ 14): Այս հեքիաթն առաջին անգամ տպագրվել է «Ճորճիկ»-ի գրականություն» ամսագրում, «Անտիպ հեքիաթ» խորագրով (1941, թիվ 3), որը հետագա հրատարակություններում վերանվանվել է «Վաճառականի խիղճը»:

Ծանոթանալով Աղայանի արխիվի հեքիաթներին վերաբերող տասնյակ գրառումներին ու նշումներին, համոզվում ենք, որ հեքիաթագիրը յուրաքանչյուր հեքիաթի մտնեցել է յուրովի՝ ելնելով դրա առանձնահատկություններից: Ունենալով գրական մշակման կոնկրետ նպատակ, երբեմն բնագրերում անտեսված, երկրորդ պլան մղված գաղափարը դարձնելով իր հեքիաթի գլխավոր առանցքը, ավելի է ընդգծել ու շեշտել, հարմարացրել իր գաղափարական, մանկավարժական սկզբունքներին, կատարել ծանր ու եռանդուն աշխատանք:

Աղայանը ժողովրդական հեքիաթների տարբերակները հավաքել, սրբագրել, համեմատել է իրար հետ եւ ընտրել լավագույնից լավագույնը, ոսկերչի նման հղկել է ու բյուրեղացրել, ստեղծել է կոտ ու անզուգական, աղայանական անկրկնելի հեքիաթները:

Ի տարբերություն ժողովրդական բանահյուսական նյութերի գեղարվեստական մշակման առաջին փուլի, երբ հեղինակը սահմանափակվում է ստեղծագործական ոչ մանրակրկիտ աշխատանքով, ժողովրդական բնագրի վրա աննշան լեզվաոճական շտկումներ, անհրաժեշտ կրճատումներ կատարելով (երևակայական դրվագ կամ կերպար չի ներմուծում), երկրորդ փուլում, ընդհակառակը, հեղինակն իրեն իրավունք է վերապահում՝ հիմք ընդունելով ժողովրդական տարբերակի ընտրած սյուժեյն, ստեղծագործական երևակայությամբ զարգացնել այն,

-Ոչ կարեւոր տալ քեզ գոր խնդրեցեր:
Եւ յարուցեալ տիկինն յաղօթս, եկաց առաջի սրբոյ նշանին և երկիր եպագ արքայ և գնաց զճանապարհն իւր: Եւ ասէ արքա զմեծամեծս իւր:

-Այրի սիրա իմ յաղագս բարեռոհմ և հաւատարիմ կնոջն այնմիկ: Բանգի բագում ծախս հանեալ ի դրան իմում և դարձաւ գնաց՝ տրաւում և ունայն:

Անդ էր Յոհան՝ այր փիլիսոփա և սուրբ և սիրեր գնա արքա: Եւ ասէ Յոհան ցարքայ:

-Արայ գոր ասեմս: Դի՛ր սուր ի պահարանի սրբոյ նշանի անառն: Եւ ասա զկիճն, զի աղօթս արասցէ: Եթե կամք լիցի սրբոյ նշանին՝ տացէ նմա մասն, ձեռամբ հոգւոյն սրբոյ:

Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի արքայի: Յղեաց և դարձոյց զկիճն և եկալ եկաց առաջի նորա: Պատասխան ետ արքայ և ասէ.

--Ով կին դու, մեծ հոգս եղեր դու ինձ: Եւ արդ դեմ սուր ի պահարանի սրբոյ նշանին Բրիստոսի: Եւ դու անեալ զեպիսկոպոս և զբահանայ քո և արասցուք աղօթս՝ հսկմամբ զիշերոյ: Եթե հաճոյեսցի տեսան Աստուծոյ, տացէ քեզ մասն ըստ հաւատոց քոց:

Եւ երկիր եպագ տիկինն արքայի: Յայն ժամ հրամանաց արքա բերել զնշան խաչին և բացեալ զարկոյն ուր կայր փայտն սր., իսկ և որին ոսկի և եղեալ դանակ ի նմա, կնքեաց մատանեալ արքունի: Եւ եղև ի մտանել արևուն, եկալ առաջի սրբոյ նշանին եպիսկոպոսունքն և բահանայք բագումք, միաբան բագմութեամբ: Հաս և Յոհան Մայրազոնեցի և հսկեցին զգիշերն ամբողջ սաղմոսիւր և խնդումովք, մինչև զառաւուտն: Իսկ թագաւորն բացեալ զոսկի պահարան խաչին և անա տեսանէր մատուն երկու հաւեալ ի սրբոյ փայտէն: Եւ հիացեալն զարմանալօք ընդ հաւատս կնոջ: Եւ ասէ թագաւորն.

--Ով դու կին, մեծ եմ հաւատք քո:
Եւ երանէին ի վրա եղելոցն: Եւ ասէին միաբերան.

--Երանի է փիճակի սրբոյն Գ. Լուսավորչի:
Եւ անեալ գնաց տիկինն, գոր շնորհեցաւ նմա յԱստուած զնշան խաչին: Եւ իբրև գնաց ընդ ճանապարհն, անցեալ ի դաշտին, որ Հացունեաց կոչի: Եւ մինչ ղեռ երթային զճանապարհով և հանկարծակի նստաւ ջորին, յորում էր նշան խաչին, յոսկիապատ կառքն և ոչ եղև շարժել գնա: Նաև ոչ եպիսկոպոսքն և ոչ բահանայքն: Ապա անեալ տիկնոջն զսկիւխնն ոսկի ի գիրկ իւր, յորում էր նշան խաչին և ոչ կարաց շարժել ի տեղոջն: Եւ յոգոց հանէր, յայր:

Եւ հորդահոս յեղոր զարատունս և ասէր.
--Տեր Յիսուս, ողորմեալ ինձ: Եւ արդ զի՞ զրկես զիս ի ցանկալի գանձուցս, գոր քեզն արանդեցեր ինձ: Չի կամիմ տանել զաս ի բնակութիւն հարց իմոց:
Եւ լուռ լինէին իբրև ժամ մի: Ապա սկսաւ տիկինն լալագին ասել.

-Ով տեր Աստուած իմ, դու նոյն աներն ես և այս սովորութիւն քո որպէս և ասացիր, թէ այլք վաստակեցան և այլք մտցեն ի վաստակս նոցա:

Եւ անա եկն այր մի միայնակեաց, որ էր ի լերինն բնակեալ և ասէ զտիկինն:

--Ով, բարեպաշտ տիրուհի, հրամայեաց տեր Աստուած բնակիլ սր. նշանիդ յայսմ տեղոց:
Եւ ապա լուեալ, ետ փառս Աստուծոյ: Եւ շինեաց վայելուչ վկայարան ի տեղոջն: Եւ գնաց գաւանն Հացունեաց և զնուրից արանին և ետ ի վանս նշանի խաչին: Եւ ինքն գնաց յաշխարհն Միւնեաց և անդ պատմէր զմէր սրանչելիսն Աստուծոյ և զգորութիւն սրբոյ նշանի խաչին ի փառս Աստուծոյ:

Եւ անա եկն այր մի միայնակեաց, որ էր ի լերինն բնակեալ և ասէ զտիկինն:

--Ով, բարեպաշտ տիրուհի, հրամայեաց տեր Աստուած բնակիլ սր. նշանիդ յայսմ տեղոց:

Եւ ապա լուեալ, ետ փառս Աստուծոյ: Եւ շինեաց վայելուչ վկայարան ի տեղոջն: Եւ գնաց գաւանն Հացունեաց և զնուրից արանին և ետ ի վանս նշանի խաչին: Եւ ինքն գնաց յաշխարհն Միւնեաց և անդ պատմէր զմէր սրանչելիսն Աստուծոյ և զգորութիւն սրբոյ նշանի խաչին ի փառս Աստուծոյ:

ИСКАНДАРЯН Н. М. — Армянское средневековое сказание под названием “Ацунянц хач”.

В данной статье была сделана попытка ознакомить читателя с одним из жанров богатой армянской средневековой литературы вообще и сказания в частности. Это сказание было обнаружено нами в древних армянских рукописях. Оно повествует нам об историческом походе греческого царя Геракла в Персию (Պարկախախան), с целью вернуть раннее похищенный крест в храм Христа. В этом благородном деле Гераклу предлагает свою помощь княжна Сюника Биорег, которая за свое боголюбие была награждена частью креста.

В сказаниях армянского средневековья отражена действительность всех периодов жизни армянского народа, и почти всегда сказания носили религиозный характер. До 12-13-ых веков в сказаниях чаще всего отражались героические поступки царей, князей и полководцев армянской истории. Кроме того, что это сказание было описано в рукописях (N 1775, 3461, 3519), оно освящено также в “История” Шапуга Багратуни, где оно переплетается с общей историей 7-го века.

Յոհան—Մայրազոնեցի, հմտաւ աստուածարան, Կոմիտաս կաթողիկոսի տեղապահ (621- 628):

հարստացնել նոր դեպքերով, գործողություններով, կերպարներով, ստեղծել նոր ծավալի ու բովանդակության գեղարվեստական մշակված հեղինակային տարրերակը:

Աղայանի հեքիաթների մեջ գեղարվեստական մշակվածությամբ ու ռեալիստական գունեղ նկարագրությամբ, նպատակասլացությամբ ու ճանաչողական արժեքով առանձնանում է «Անահիտը», որը լույս է տեսել 1881 թվականին Թիֆլիսում եւ անմիջապես ջերմորեն ընդունվել ընթերցողների կողմից: «Անահիտի» մասին խոսելիս չպետք է զանց առնել մի փաստ, որը գրավել է նաև Հովհ. Թումանյանի ուշադրությունը: Ժամանակի քննադատներից մեկը՝ Լեոն Մանվելյանը, այն միայն է հայտնել, թե իբր Ալմայանը իր հեքիաթը վերցրել է Մեսրոպ Թադևոսյանի «Վեպ Վարսենկան» վիպակից:

Գրողը պատրաստվում էր հերքել «Անահիտի» վերաբերյալ այդ կարծիքը, բայց անսպասելի մահը վրա հասավ: Նրա վերոհիշյալ հեքիաթի հետ առնչվող մեկնաբանությունը եւ Մանվելյանի պատասխանը ավելց թումանյանը, 1912 թվականի սեպտեմբերին իր ուշագրավ «Ղ. Աղայանի «Անահիտը» հոդվածով (Հորիզոն», 1912, թիվ 205):

Թումանյանը սպացուցեց, որ Աղայանի «Անահիտը» ժողովրդական հեքիաթ է, որի մի տարրերակն էլ «Փեշակը ոսկի ա» վերնագրով տպված է Տիգրան Նավասարդյանի հեքիաթների ժողովածուի մեջ I, էն էլ Լեոն տարբերակը, որ Աղայանը զիտեր մանկուց, իսկ վրացականը «Թագավորն ու արիեստավորը» անունով (տպված է «Աղբյուր» ամսագրում 1883 թվականին, թիվ 1):

Աղայանի «Անահիտի» համար սկզբնաղբյուր են ծառայել ազգային բազում բանավոր պատումները, որոնք գրողը հավաքել է երկար պրպտումներով: Բաղդատելով հեքիաթի տարբերակները, հավատարիմ է մնացել հասկապես հայկական աղբյուրին եւ համադրական եղանակով ստեղծել է իսկական գեղարվեստական գոհար:

Փոքր ինչ պատկերացում կազմելու համար, համեմատելով ժողովրդական երկու տարբերակներում (Լուի եւ Արցախ) եւ Աղայանի մշակած հեքիաթում նկարագրված այն հասկածը, ուր Անահիտը մերժում է թագավորի աղայի՝ Վաչագանի առաջարկությունը:

ԼՈՌՈՒ ՏԱՐԲԵՐԱԿ - «ՓԵՇԱԿԸ ՈՍԿԻ Ա»

« - Թագավորն ի՞նչ փեշակ ունի, - հարցնում է աղջիկը:

- Վոս, ախչի, ի՞նչ ես ասում, զժվել խո՞չես: Ի՞նչ փեշակ պիտի ունենա թագավորը: Նա ըշխարիս սերն ա, ի՞նչ ուզես՝ կանե, ինչ ուզե՛ կոսե, ոնց որ ուզե՛ կապրի, մենք չիմս էլ նրա դույն ենք:
- Չէ, - ասում ա ախչիկը, - իմ մարդը պետք ա մի փեշակ էլ ա գիտեմա, ես անփեշակ մարդին կնիկ չեմ գնար»:

ԱՐՑԱԽԻ ՏԱՐԲԵՐԱԿ - «ԱՆԱՀԻՏ»

«Ախճիզն էլ քա՛ թաքսվորեն հի՞նչ փեշակ օնրե:

Տահանք քա՛ հինչ փեշակ պիտի ինի: Էքցում, այր թաքավեր ա:

Ախճիզը քա՛ օգում չըն»:

Աղայան «Անահիտ»

« - նա շատ լավ երիտասարդ էր: Բայց արդյոք զիտե՞ մի որեիցե արիեստ:

- Նա թագավորի որդի է Անահիտ, նրան ի՞նչ արիեստ է հարկավոր, ողջ աշխարհի տերը նա է, ամենքն էլ նրա ծառաներն են:

- Գիտեմ, որ այդպես է, բայց ո՞վ զիտե, այսօրվան ծառաների տերը վաղը կարող է ինքը լինել ծառա, թեև նա թագավոր էլ լինի եղած»:⁴

1. Տ. Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, 5-րդ գիրք, Թիֆլիս, 1889, էջ 74:

2. Նույն աղբյուր:

3. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ-7, Երևան, 1979, էջ 55:

4. Ղ. Աղայան, Հեքիաթներ, Երևան, 1937, էջ 70-71:

Աղայանը իմաստավորել է միտքը՝ « ծառաների տերը վաղը կարող է ինքը լինի ծառա» եւ «արիեստը պետք է զիտենա տեր, թագավոր եւ իշխան»:

Թվում է, թե փոփոխություններն անշուն են, սակայն ոճական իմաստավորում են հաղորդում հեքիաթին եւ ընդգծում արիեստի անհրաժեշտությունը բոլոր խավերի մարդկանց կյանքում: Ժողովրդի կյանքում արիեստի կենսական ու վճռական նշանակության գաղափարը արտացոլում է Աղայանի մանկավարժական հայացքների համակարգը:

Հեքիաթի իմաստավորման կարեւոր գծերից է աշխատանքը, արիեստը, որը ժողովրդի համար ապահովում է բարեկեցիկ ու անդորր կյանք: Գրողը հարազատ մնալով ժողովրդական սկզբնաղբյուրների սյուժեին՝ ավելի է խորացրել դրանցում շոշափված համամարդկային գաղափարները, ընդլայնել է իր հերոսների գործունեության շրջանակները, նրանց պատկերել զանազան հարաբերությունների մեջ, հեքիաթային դարաշրջանը

օգտագործել իր հասարակական ու մանկավարժական գաղափարների մարմնավորման ու ժամանակի սուր խնդիրները արծարծելու համար:

Երբ կարդում ես Աղայանի «Չանգի - Չրանգի» հեքիաթը ու այն համեմատում Լուսի տարբերակի «Ուշապ աղջկա հեքիաթի» հետ, որը սկզբնաղբյուր է ծառայել մեծ հեքիաթասացի համար, զգում ես, թե, ինչպիսի ջանասիրությամբ ու խնամքով, ինչպիսի սրնությամբ է ստեղծվել գրական տարբերակը: Այս հեքիաթի մշակման ընթացքում գրողը կատարել է կառուցվածքային անհրաժեշտ շեղումներ, ոճական, նկարագրական փոփոխություններ: Սկզբնաղբյուրում դեպքերը զարգանում են չափազանց արագ, երբեմն մանվածապատ, իսկ Աղայանը երևիսաներին ավելի մատչելի դարձնելու համար մանրամասն պատկերում է վիշապ աղջկա արարքները եւ նոր միայն տրամաբանորեն զարգացնում սյուժեն: Աղայանի հեքիաթը տարբերվում է բանահյուսական տարբերակից ոչ այնքան սյուժեով, հերոսների կամ դրվագների փոփոխությամբ, որքան հետաքրքիր ու տպավորիչ պատմեցածությամբ, ժողովրդական երանգներով ու չափազանցություններով:

Ժողովրդական հեքիաթների տարբերակներից է ծնվել նաև Աղայանի «Այծատուր» հեքիաթը, որի սկզբնաղբյուրներից են «Ճակատի գիրը չի ջնջվի», «Աստու գրածը բոզումի՞չ չեղնի», «Խոր փորով խորատակ կինի...», «Այծի բալայի հեքիաթը», «Ճկտակյիրը»: Եթե ժողովրդական բնագրերում համանուն տեքիաթի իմաստային բովանդակությունը սկզբից մինչեւ վերջ ուղեկցվում է անողոր ճակատագրի հալածանքների պատկերմամբ, ապա Աղայանը բոլորովին այլ լուծում է ապիս իր հեքիաթին եւ եզրավակում ժողովրդական առածի տողերով: «Ուրիշի համար հոր փորոզը ինքը կընկնի նրա մեջը»:

«Հնարագետ ջուլիակը» հեքիաթի համար իմք են հանդիսացել Տարանի «Իմաստուն ջուլիակ» եւ Գարեգին Սրվանձոտյանի «Համով - հոտով» գրքում տպագրված «Իմաստուն ջուլիակ» սկզբնաղբյուրները: Աղայանն անփոփոխ թողնելով ժողովրդական բնագրերի սյուժեային գիծը՝ ներմուծել է նորանոր դրվագներ, կերպարներ, ավելորդ եւ ծանծրայի մասերը կրճատել ու հղկել:

Եթե ժողովրդական տարբերակում հայտնույ, առանց որեւէ գեղարվեստական մախապատրաստության, պատկերվում է դերվիշի հայտնվելը եւ կտրուկ գործողությունները հետետում են մեկը մյուսին, ապա Աղայանի մոտ բոլորովին տարբեր է: Գրողը ավելի խորհրդավոր երանգ է հաղորդում այս ավանդությանը, եւ մարդիկ առասպելներ են հյուսում դերվիշի առեղծվածի շուրջ եւ հուսահատությունից գլուխները կորցնում: Գեղեցիկ մտահղացված դրվագներից է թագավորի ծախված այցելությունը դերվիշին, նրանց միջեւ տեղի ունեցող միջադեպը, հնարամիտ երկխոսությունները: Հեքիաթի ուշագրավ նկարագրություններից է ջուլիակի կողմից գիտնականներին սուր ծաղրի ենթարկելու տեսարանը: Եթե ժողովրդական պատումի հիմնական իմաստը դրսեւորվում է վերջաբանում, երբ ջուլիակն իր համեստ վարձատրությունը ստանալով թագավորից, որպես պարգև խնդրում է, որ նա իր ծառաներին՝ կոշկակարին ու ջուլիակին էլ մարդու տեղ դնի, ապա Աղայանի մոտ լուծումն այլ է, թագավորը մեծ պատվի արժանացնելով ջուլիակին, հորդորում է բաց անել մի մեծ գործարան, որ երկրով մեկ ծաղկի նրա արիեստը:

Աղայանը երկար տարիներ ապրելով ու ստեղծագործելով Թիֆլիսում, շվիվելով վրաց ժողովրդի բարբերին, գրական միջավայրին, բնականաբար բուռն հետաքրքրություն է ցուցաբերել դեպի վրաց ժողովրդի նիստ ու կացը, ազգային սովորությունները, ժողովրդական բանահյուսությունը: Դրա վառ ապացույցն է 1913 թվականին տպագրված Տ. Փիլոմյանի «Ղազարոս Աղայանի կապը վրաց բանավոր գրականության հետ» հոդվածը¹:

Գրողն իր կնոջ օգնությամբ, որը լավ տիրապետում էր վրացերենին, ծանոթանում է Հակոբ Գոզրաշվիլու «Դուղա էնա» (Մայրենի լեզու) դասագրքում գետնոված գրույցներին, նյութերին, որոնք անհետևանք չեն մնում հեքիաթների տարբերակների մշակման ժամանակ: Աղայանին ծանոթ է Լոկե «Եղեգնուհի» հեքիաթի վրացական տարբերակը («Լեռնամ բալի» - «Եղեգն աղջիկ»), որին նա անդրադարձել է 1890 թվականին «Աղբյուր» ամսագրում:²

Համադրական եղանակով մշակված հեքիաթների թվին է պատկանում նաև «Զի՛չ էլ քի՛չ էլ» հեքիաթը, որի բանահյուսական տարբերակները հայտնի են «Ուլայ», «Օխիկ», «Օխեկ» վերնագրով:

Գրողն օգտագործել է տարբեր ժողովրդների բանահյուսության մեջ տարածված թափառող սյուժե՝ աղբյուրի մոտ բնակվող կախարդի ու նրա մոտ տարբեր կերպարանքներ ընդունող, արիեստի գաղտնիքները սովորող աղքատ տղայի մասին:

Ժողովրդական տարբերակում ոչ մի-խոսք չկա բժիշկի մասին, դա Աղայանի մտահղացումն է: Գրողն Ուլային հակադրել է իմաստուն բժիշկի կերպարը, որը Քաջիկին սովորեցնում է իսկական բժշկության արվեստը: Դիշու է բժշկի հաղորդած զիտելիքների մեջ էլ կան արտասովոր, ֆանտաստիկ հրաշքներ, որոնք բնորոշ են հեքիաթի ոճին:

Այս հեքիաթի ժողովրդական մեկ այլ տարբերակում (ուկրաինական) հեքիաթն ավարտվում է գլխավոր հերոսի ամուսնությամբ թագավորի աղջկա հետ, իսկ Աղայանի հեքիաթն ինչ ավելի խորհրդավոր ու զարմանալի վերջաբան:

Մի քանի տարբերակների հիման վրա համադրական եղանակով են մշակվել «Ասլան բալա» (սկզբնաղբյուրները՝ «Ասլան - բալասու հեքիաթը», «Ասլան բալասի»), «Հազարան բլրուր» («Միմամախուլը», «Չմրուխտ ոչի հեքիաթը»), «Մանուկ խան» («Մանուկ թագավոր», «Արդալամիս թագավոր») հեքիաթները:

¹ «Հորիզոն», Թիֆլիս, 1913, թիվ 97:

² «Աղբյուր», Թիֆլիս, 1890, թիվ 1, էջ 10-20:

«Մանուկ խան» հեքիաթի մեր ձեռքի տակ եղած ժողովրդական տարբերակներում (հայկական, ռուսական, քաթարական) պատմվում է սովորական մի պատմություն. մեկը խաբեությանը կողմնակալում ու հափշտակելով հարեւանի հարստությունը, դառնում է մեծահարուստ եւ ապրում փառք ու պատվով: Գրողը հավատարիմ մնալով հիմնական նյութին, դրան ավելացրել է խարդախ մեկի կողմից՝ իր անունով եկեղեցի կառուցելու եւ քաղաքի առաջին սիրելիին դառնալու փաստը: Հեքիաթի գլխավոր հերոսը ներկայացված է ժողովրդական նախատիպի բնավորության եւ գործելակերպի բնորոշ գծերով ու յուրահատկություններով: «Մանուկ խան» հեքիաթի, ինչպես նաեւ ժողովրդական այլ տարբերակների հերոսների մեջ, ի հակադրություն իրականում հանդիպող անօրեն դատավորների, ժողովուրդը խառնել է իր պայծառ երազանքը արդար ու իմաստուն դատավորների մասին:

Աղայանի ֆունդում է պահվում «Հարազան բլուր» հեքիաթի ինքնագրից մի հատված՝ սեւագիր ջնջումներով, մաշված եւ պատված թերթերով: Այս հեքիաթը առաջին անգամ տպագրվել է «Հասկեր» ամսագրում, 1911 թ. առաջին չորս համարներում:

«Հարազան բլուր» թեման պատկանում է աշխարհի ժողովուրդների բանահյուսության մեջ լայն տարածում գտած հեքիաթների սյուժեների թվին: Համարյա բոլոր ժողովուրդներն էլ բազմաթիվ տարբերակներով պահպանել ու պատմել են հրաշք թռչունի, անմահական խնձորի հետեւից գնացող երեք եղբայրների արկածների ու նրանց սպասող չնաշխարհիկ արքայադստեր մասին պատմությունը:

Հայտնի է, որ Թումանյանը երկար տարիներ հավաքել է այս հեքիաթի տարբերակները, մեծ ոգեւորությամբ աշխատել «Հարազան բլուր» պոեմի վրա, որը ցավոք մնացել է անավարտ եւ միայն հատվածներ են տպագրվել:

Վերոհիշյալ հեքիաթը մշակել են նաեւ Ստ. Չորյանը, Աք. Խնկոյանը եւ համանուն վերնագրերով տպագրել իրենց ժողովածուներում: Ամենախոսուն վկայությունն այն է, որ «Հազարան բլուր» Լոռվա, Մեղրու, Արցախի, Տարսնի եւ այլ տարբերակներ տեղ են գտել այդ գավառների հեքիաթներին նվիրված հատորներում, որոնք հրատարակել է Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի Ազգագրության եւ հնագիտության ինստիտուտը:

Աղայանի հեքիաթների մշակումները ամբողջովին հաստատում են այն պահանջը, որ բնորոշել է Հովհ. Թումանյանը. «Հեքիաթները անդունդներ են՝ խոր, անծայր, անվերջ... Հեքիաթները գրական մարդիկ չեն հորինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եվ շնորհից հենց էլ պատմելու մեջ է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզվով, ինչ ոճով ու ինչպես պատմել, որ եւ գեղեցիկ դուրս գա, եւ ժողովրդականի համը ու հոտը չկորցնի»¹:

МУРАДЯН А. С. — Из творческой истории сказок Г. Агаяна. Сравнение созданных Агаяном шедевров с его же пометками, правками и замечаниями, сделанными на рукописях, а также с вариантами черновиков из личного архива писателя, хранящегося в Музее литературы и искусства им. Е. Чаренца, - вот ключ для проникновения в творческую лабораторию писателя и ознакомления с его основополагающими принципами литературной обработки.

¹ Ե. Չարենցի անվան քանդաքան, Աղայանի ֆունդ-8, թիվ 2, էջ 10:

² Հովհ. Թումանյան, Աստվածներ, թեստեր, խոսքեր, «Կենսագրական եւ մատենագիտական տեղեկություններ», Երևան, 1969, էջ 72:

ԱՐԱՄ ՀԱՅԿԱՉԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՇՈՒՐԱՆԻԿ ՆԻԿՈՅԱՆ

Արամ Հայկազը սփյուռքահայ գրականության սիրված դեմքերից է:

20-ական թվականներից հաստատվելով ԱՄՆ-ում՝ Արամ Հայկազը հասկացավ, որ հայ մնալու եւ հայ ապրելու համար կարեւոր տեղ ունի գրականությունը: Նա համոզված էր, որ միակ ճշմարտությունը հայ լինելն է, իսկ միակ նպատակը՝ հայ մնալը:

Բ. Նուրիկյանին ուղղված նամակներից մեկում Արամ Հայկազը գրում է. «20-30 տարուան մեր ճիգերը գրեթե չարդիւնատուրեցան, ու պատակաբար հայութիւնը այսօր Մփիտքի մեջ, աւելի քան երբեք՝ մօտ է զահաւիւթին: Եթէ միացեալ ուժերով աշխատենք, կրճաւք քիչ մը աւելի արդիւնք ձեռք ձգել, այսինքն քիչ մը աւելի երկար ժամանակ հայ մնալու ու մեր շուրջիները հայ պահել...»

Մենք-ես ու դուն ու մեզի պէս խորհողներ, կուսակցական ըլլալէ առաջ հայ եղողներ, չե՞նք կրճար իրար գալ ու բոլոր երկրորդական գծով ու անպատասխան հաշիւներէ վեր եղած՝ մշակույթի անունով կորիզ մը կազմել»:

Ահա այս մտասերեռումով էլ Արամ Հայկազը ստեղծում է իր գրականությունը:

Հայրենի երկրի հիշողությունները դեռ վառ էին, իսկ արքայի չորս տարիները «Զյուրդիստանի լեռներում էջ» սովորեցրել էին նրան յուրովի տեսնել, զգալ, սիրել:

Գրչանուն վերցնելով գոհված եղբոր անունը՝ գրողն սկսում է տպագրվել «ցերեկը հացին ետեւէն վազելով եւ զիջերը միայն գրականութեան կամ ինքնագրագաման յատկացնելով, երբ մարմինը յոգնած է ու աչքերը հանգիստ կը պահանջեն»:

Գրական առաջին իսկ քայլերից Արամ Հայկազը ջերմ ընդունելություն է գտնում ընթերցողներ շրջանում, - այս կամ այն թերթին, ամսագրին. աշխատակցելու բազմաթիվ հրավերներ ստանում:

Արամ Հայկազը կարոտի գրականության հետադարձներից էր եւ փորձում էր վերնագրել անցյալի հիշատակները:

Հայրենի եզերքն կորցրած հայն օտար երկնի տակ տառապում էր կարոտից, որը որքան էլ քաղցր էր ու համակող, այնքան էլ ցավատանջ ու տառապազին: Այս կարոտն էլ որոշեց սփյուռքահայ գրականության զարգացման հետագա ճակատագիրը, նրա լինելիության ճանապարհը:

Սփյուռքահայ գրողներից շատերն անցան օտարագրության, ինչպես Շահան Շահնուրը, Լեւոն-Չավեն Սյուրմեյանը, Մայրլ Աղիենը: Չմայած Արամ Հայկազի քարգմանված գործերը վառ չէին հնչում, նա հավատարիմ մնաց մայրենի լեզվին՝ որպէս ապացույց պատմելով հետեւյալը. «Երիտասարդ եւ օժտեալ հայ գրող մը նորավէպ մը կը պատմէ նշանատր Պելգիացի հեղինակ Սօրխա՝Մեթերլինկին կըսէ. «Ասիկա կրճաւ հայերէն գրել, կամ գերմաներէն, կամ ֆրանսերէն: Լեզուներէն ո՞րը ալնենէն արտահայտիչը կըլլայ իմ հորավէպիս համար»: Մեթերլինկ կը պատասխանէ. «Ի՞նչ լեզուով կաղօթես»: «Մայրենի լեզուով, անշուշտ», - կըսէ երիտասարդ գրողը: «Ուրեմն պետք է հայերէն գրես, - կըսէ Մեթերլինկ»:

Բեղուն է Արամ Հայկազի գրիչը: Հրատարակել է պատմվածքների բազմաթիվ ժողովածուներ՝ «Յեղին ձայնը» (առաջին եւ երկրորդ հատորները), «Չորս աշխարհ», «Պանդոկ», «Կարօտ», «Երջանկութիւն», «Ապրէք երեխէք», «Չորս տարի Զյուրդիստանի լեռներում մէջ» վեպը եւ «Շապին-Գարահիսարը եւ հերոսամարտը» լայնածավալ աշխատությունը:

Կարոտը Արամ Հայկազի գրականությունը բնութագրող հիմնական գծերից է: Հեղինակն ինքսը այս կարոտին միախառնված, իր գրականության ներկան անցյալին կապող այս գորեղ զգացությամբ մեզ տանում է դեպի անցյալ, քանի որ այնտեղ է հային անհրաժեշտ կենսական ուժի աղբյուրը:

Մակայն սա չի նշանակում, թե հեղինակը չի տեսնում ներկան, չի երազում ապագայի մասին: Եթե փորձենք բնութագրել նրա ստեղծագործությունն ըստ միջավայրի, ապա կտեսնենք, որ նա գրում է չորս տարբեր աշխարհների մասին: Հայրենի եզերք. հեղինակը պատմում է հայրենի երկրի, մանկության անհոգ ու երջանիկ օրերի մասին, «Զյուրդիստանի լեռներ» գրողի պատմական օրերի հիշողություններն են, արքայի երկար ու ծիգ չորս տարիները: Պոլիսը վերադարձն է դեպի հայկականություն, իսկ Ալեքիկան արդեն հեղինակի իրական կյանքն է: Այս աշխարհները անջրպետված, մեկուսացված չեն: Շատ հաճախ ամերիկյան կյանքին վերաբերող որեւէ պատմություն անելիս հեղինակը շեղվում է բուն նյութից, մտքի թեւերով թռչում դեպի հայրենի երկիր, ապա վերադառնում իրականություն՝ մի քիչ ավելի թախծոտ, մի քիչ ավելի մեծացած:

Գրականության նյութը նա վերցնում է իրեն շրջապատող մարդկայն կյանքից. «Իմ գրականութիւնս կեանքիս վէպն է. վէպ մը որմն մէջ կը խառնուին քանի մը դրացիներ, ընտանիքիս անդամներ, սերերս-յիմար ու խելօք ու քիչ մըն ալ գաւառացի տղու ապրում...»: Իր ստեղծագործությունների բնարական հերոսն ինքն է՝ հեղինակը, որն ամեն մի տողի մեջ բացում է իր հոգին, իր սիրտը: Իր ստեղծագործությունները նա հիմնականում